

ՀԱՅԲ

Հ Ա Ն Դ Ի Ս

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն

Կ Ը Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ո Ւ Ի Ա Մ Ե Ն Ա Մ Ս Ո Յ 1 Ի Ն Ե Ի 15 Ի Ն

Տէր և Խմբագիր — Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ

Editor — M. S. GABRIEL M. D.

202 W. 23d St., New York.


Տարեկան բաժնեգինն է ամեն երկրաց համար 2 թալէս կամ 10 ֆրանք:

Բաժանորդագրութիւնք կը հաշուին Յունվար 1 էն:

Entered as second-class mail matter. at P.O. New York. NY

ԲՈՎԱՆԴԱՆՈՒԹԻՒՆ

Պատկեր Մէքայէլ Նալբանդեանցի. — Պատեն Ժամ. — Մատենախօսական. Մարգարամ. — Պատմութիւն Ամերիկայի Հայ Գաղթականութեան. — Նամակ Թեհրանէն. — Նամակ Խարբերդէն. — Գաղթականութիւն յԱմերիկա. — Օտար Լեզուաւ Լրագրեր ի Միացեալ Նահանգս—Շիժաղենի Պարոնեանի — Քաղաքական, Ազգային, Համազան և Տեղական լուրեր:



Մ Ի Ք Ա Յ Է Լ Ն Ա Լ Բ Ա Ն Դ Ե Ա Ն Յ

(Հրատարակութիւն «Հայք»ի)

ԵՐԳ ԱՋԱՏՈՒԹԵԱՆ

Ազատ Աստուած այն օրից
Երբ հաճեցաւ շունչ փչել,
Իմ հողանիւթ շինուածքին
Կենդանութիւն պաւզեւել,

Ես ամբարբառ մի մամուկ,
Երկու ձեռքս պարզեցի,
Եւ իմ անգոր թեւերով
Ազատութիւն գրկեցի:

Պ Ա Տ Ե Հ Փ Ա Մ

Աստեղաբաշխն ի դիտարանին մի քանի վայրկեան ներհ' լուր կրնայ այս ինչ երեւոյթն դիտելու պատեհութիւնն կորուսանել, և կորուսանել յաւիտեանս, քանզի է' երկնային մարմնոց վերաբերեալ երեւոյթ որ հազար կամ երկու հազար տարին միանգամ միայն տեղի կ'ունենայ:

Նոյնպէս կան պատեհութիւններ որք ազգի մի գոյութեան երկար դարերուն մէջ մէկ կամ երկու անգամ միայն կ'ընծայուին:

Մեր ազգին համար ահա հասած է այդպիսի ահաւոր ժամ զոր եթէ մեք, Տիգրաններու և Վարդաններու ներկայ սերունդ, բոլոր ուժով և հոգով գործածեմք, Հայ ազգն կը վերածնի և կը սկսի յառաջագոյն և քաղաքակիրթ ընթացք մի ընթանալ ի շարս նոր ազգաց, — բայց եթէ փախցունեմք այս պատեհութիւն, դատապարտած պիտի լինիմք մեր ցեղն քիչ ժամանակէն մեռեալ ազգաց խառնուելու:

Հայքս հինգ հարիւր տարի անմուռնչ կրած եմք Օսմանեան տաժանակիր լուծն: Մեզ անմտածելի էր հարկաւ ազատութեան գաղափարն ա'յն ատեն երբ Օսմանցւոց ահն բովանդակ Եւրոպայն կը սարսէր: Բայց Օսմանեան պորութիւնն վերջապէս սկսաւ ծերանալ, և արդէն այդ հսկայ տէրութիւն կորացած է դէպ ի գերեզման: Նորա հպատակ ցեղերէն ոմանք ինքնօրէն ազգային կեանք մի սկսած են, և ուրիշներ ալ կը խլրտին դէպ ի նոյն նպատակ: Արաբիան ապստամբութեան դըրօշ կը պարգէ, Տրիպոլիսն զէնք կ'առնու, Պաղտատ կը յուզի, և մեք Հայերս ... կը ներհեմք:

Ի՞նչ կ'ուզէք Հայե'ր, մանաւանդ ազատ երկիրնեւրու մէջ բնակող Հայե'ր, որպէս զի և դուք սթափիք և շարժիք:

Պէ՞տք է որ էրզրումի կոտորածին նման կոտորած մի լինի որպէս զի և դուք յուզուիք վայրիկ մի: Միթէ կոտորածն դադրած է: Հարիւր Հայեր չեն ջարդուած բայց երկու միլիոնէ բաղկացեալ Հայ ժողովուրդն շարունակ կը ցրուի, կ'սնչանայ, կը սպառի...:

Յուզուեցաք երբ յեղափոխականք զՊատրիարքն ի կառս բաղմեցուցած դէպ ի կայսերական Պալատն չուառին: Այժմ զՊատրիարք բռնաբարող չկայ, բայց երկու միլիոն Հայեր իրենց մօնչիւն կը խեղդեն իրենց կրծոց մէջ առ երկիւղի: Ասացէ՛ք, ո՞րն է աւելի կարեւոր Լուր:

Հայեր, Բ. Գուռն գարան լարած է: Նա որոշած իրողութիւնը և Գուռն—Գափուի դէպքերուն նման պատահմունքն կանխաւ խափանել որպէս զի ազմկալից լրերով եւրոպայի ուշադրութիւնն չգտանայ դէպ ի Հայաստան: Նա որոշած է արտաքին անդորրութեան քողին ներքեւ յառաջ տանիլ իւր աւերիչ գործողութիւններն:

Չարաչար կը սխալիք եթէ գործ մ'ընելու համար սպասէք մեծաթուռի լուրերու:

Կայ՞ ձեր մէջ ու է մէկն որ գիտցած չլինի լրաց լուրն այն ահաւոր — թէ Օսմանեան Հայաստանն կը կողմալուծուի և կը շքանայ կամաց կամաց:

Այլ ուրեմն մի՛ հարցնէք — ի՞նչ լուր կայ. այլ սարսափեցէ՛ք, գթացէ՛ք Հայաստանի վերայ, ձեռք ձեռքի տուէ՛ք, Յանձնախումբ Յանձնախմբի հետ, Կուսակցութիւն կուսակցութեան հետ համակիր յարաբերութեան մասէք, օգնեցէ՛ք այն ընկերութեանց որոց ընթացքին կը հաւնիք, տարածեցէ՛ք այն թերթեր որոց ուղղութիւնն ազգօգուտ կը գտնէք, գրեցէ՛ք թերթերու մէջ եթէ ունիք կարեւոր առաջարկութիւն կամ փրկաւէտ խրատ:

Շատ բան կայ անելու: Վաճառականն ու հարուստը իւր բաժին ունի կատարելու, հասարակ արհեստաւորն և գործաւորն իւր բաժինն, ուսումնականն, եկեղեցականն և գիւնդապետն իւր բաժին:

Մեք Հայերս ետ նայելով մեր անցեալ աղգին պատմութեան, կը մեղադրեմք մեր նախնեաց ոմանց թուլութիւնն և երկպառակութիւնքն. կը քննադատեմք զնոսա վասն զի այս ինչ կամ այն ինչ դարու մէջ մեծ սըխալներ գործած են, յոռի քաղաքականութեան հետեւած են, անհաստատ, անհաւատարիմ, աննախատես գտնուած են, իրարու հետ միաբանիլ և ներքին ուժերն կեդրոնացունել չեն կրցած, ահագին Հայաստանէն ահագին ազգային բանակ հանել չեն գիտցած, — այսպիսի բաներ կ'աւելնէ խառնութեամբ և մարմնելով. բայց ի՞նչ կը կարծեմք, միթէ մեք այսօր միեւնոյն սխալներն չե՞մք կրկնել: Ասկէ յիսուս կամ հարիւր տարի յետոյ պիտի չընեն ապագայ սերունդք թէ 19-րդ դարու վերջերն Հայեր շարաշար մեղանշեցին հայութեան դէմ: Ազգին մէջ կային այնքան գիտուն և մշակեալ մարդիկ որքան անկէ առաջ երբեք գտնուած չէր, կային հարուստ և ազդեցիկ և գիւնդապետ Հայեր, կային զօրավարներ, կազմուած էին զօրաւոր ընկերութիւններ բոլոր դաշտականութեանց մէջ, հիմնուած էին թերթեր, բայց աւագ որ այդ մեծ գործութիւններ, այդ գիտուն գլուխներ, այդ ճոխ քսակներ, այդ հուժկու բազուկներ չկարացին միանալ և նենդանակիլ որպէս զի յազմահարիչ ոյժ մի լինէին — ընչին իւր ոսկիներ զլացաւ, խմբագիրք զիրար պատառեցին, գործիչք «ո՛ պիտի լինին մեծ» ի հոգեւորմէ իրարմէ քաշուեցան, և անգին ու անդարձ պատեհութիւնն ձեռքէ հանեցին...

Մարտափոխք, Հայեր, ապագայի դատարանէն: Մեք կարող եմք փրկել Հայութիւնն եթէ կամք և անձնութիւններ ունենամք: Մեք կարող եմք Հայ Գաղթական աշխարհն կեղծակերպել և Տիեզերական կեդրոն մի ստեղծել: Եթէ ամէն Հայ այսօր և այս ամիս ընէ ինչ որ իւր բարոյական և նիւթական կարողութեան չափերն կը ներեն, վաղն և գալ ամիս աւելի՛ յոտակ պիտի տեսնէ բաներն, և աւելի մեծ և հրաշալի գործեր պիտի ընէ հետ զհետէ:

Իս այն հաւատ ունիմ և կը յայտարարեմ համարձակ բոլոր Հայ աշխարհին թէ եթէ ամեն Հայ ընէ ինչ որ կրնայ ընել այսօր յօգուտ հայ դատին, ՀԱՅԱՍՏԱՆ ԱՆՇՈՒՇՏ ԿԸ ՓՐԿՈՒԻ:

ՄԱՏԵՆ ԱԽՕՍԱԿԱՆ

ՄԵՐՉՈՐԵՆ

ԲԱՋՈՒՄ ՁԵՒԵՐՈՎ ԲԱՑԱՏՐԵԱԼ

Աշխատասիրեաց ԳՐԻԳՈՐ ԳԱՍՊԱՐԵԱՆ

Երև Եորք, Տպարան Մ. Ս. Գաբրիէլեան, 1892

Եթէ կայ նոր հրատարակութիւն մի գոր նորանշան անուանել արժան է, այն ալ գինուորական կրթութեան վերայ գրուած այս հայերէն գիրքն է:

ՄԱՐԶԱՐԱՆ իր տեսակին մէջ առաջին գործն է հայերէն լեզուի մէջ, և կ'երեւի այնպիսի ժամանակ մի յորում շատեր լինին թերեւ հարցնող թէ ի՞նչ պէտք կար այդպիսի գիրքի, միթէ Հայերն բանակ ունի՞ն որպէս զի սպայք գործածեն զայն իբրև յիշեցուցիչ, կամ միթէ Ազգն պիտու որական կրթութեան պէտք ունի՞ք ու որ քաղաքական կեանքէ զուրկ՝ հպատակ ժողովուրդ մ'է բարեխնամ կառավարութեան անաշատ պաշտպանութեան յանձնուած:

Կը պատասխանեմք թէ «Մարգարան» թէ և գինուորական կրթութեան վերայ կը խօսի, անպատճառ գինուոր լինիլ ուղղութեան համար չէ գրուած: Այն ամենայն մարզանք և հրահանգք զորս ընթերցողն կը գտնէ գրքուկին մէջ, գերազանցապէս նպատաւոր են մարմինն կրթելու, զնդերներն զարգացունելու, անդամներն ճաղուկ և զիւրաթք գործելու, շարժմանց և քայլուածքին կորով և ճաղկութիւն միանգամայն տալու: Ո՞վ չափորժիր տեսնել, մանաւանդ թէ լինիլ ինքնին ընկերութեան մէջ այնպիսի ոք որ Ֆիզիքական չընորհ կը ցուցնէ իւր կացքին և գնացքին մէջ, որ ուղիղ դիրք, շնորհալի քայլուածք ունի և վայելուչ շարժումներ կ'ընէ:

ՄԱՐԶԱՐԱՆ մեր ազգային դատարարականութեան մէջ ևս կարէ և պարտի կատարել կարևոր դեր: Եւրոպայի և Ամերիկայի հասարակ վարժարանաց մէջ շատ հոգ կը տարուի տղաց մարմնական դատարարականութեան, և մեծ հաճոյք է տեսնել թէ ինչպէս աշակերտաց խումբեր գինուորական շատ շրջափոխութիւններ մեծ կանոնաւորութեամբ կը կատարեն մանաւանդ հանդիսաւոր օրեր:

Մեք որ Եւրոպացւոց ֆիզասկար սովորութիւններն կ'օրինակեմք այժմ այնքան փութով, գոնէ հաւատար փութով անուրիւր օրինակներ անոնց օգտակար բաներն եթէ մարմնով և մտքով փութիլ չեմք ուզեր: Սոսկալի բան է տեսնել այն վտիտ, գծողն, անոյժ նոր սերունդն որ մեր վարժարաններէն դուրս կուգայ: Ողբալի բան է դեռահասից մարմնական կազմի խանգարեալ և վատթարացեալ տեսնել միակողմանի: և պակասաւոր կրթութեան պատճառաւ: Լուրջ ուշադրութեան կարօտ խնդիր մ'է այս: Ազգային ժողով, Մամուլ և Ուսումնական խորհուրդ դարման պէտք է մտածեն և ի գործ դնեն: Եւ դարմանն, կամ դարմանի կարեւորագոյն մասն է Ֆիզիքական կրթութիւնն ստիպողական դասերու կարգն անցունել բոլոր վարժարանաց մէջ: Առ այս նպատակ պատճառական ծառայութիւն կրնայ մատուցանել ՄԱՐԶԱՐԱՆ ի նման գրքոյկ մի:

Վարժարանէ դուրս ալ, արդէն գործի մէջ մտած երիտասարդներ միթէ անդու ինքնակրթութեամբ պարագիլ չպարտի՞ն. միթէ դատարարականութիւնն վարժարանի մէջ կ'աւարտի՞ — թէ ընդհակառակն կը սկսի միայն: Թող ուրեմն ընկերական փոքրիկ կամ մեծ խմբեր գիշերային վարժարանի կրթութեանց մասն ընեն մարմ-

նամարդութիւնն, յորում ընտիր առաջնորդ կը հանդիսանայ «Մարդարանն» Տիար Գաբարեանի:

Այս գրքուկի հրահանգներն կատարելու փորձն ընող անհատք և խմբեր չուսով պիտի համոզուին թէ ոչ միայն օգտակար այլ և գերազանցապէս զուարճալի և սքոսուցիչ գործ մի կ'ընեն: ՄԱՐԶԱՐԱՆԻ հրահանգներն դպրոցի պէս օգտակար և թատարնի պէս պոստալի կ'ընեն երիտասարդաց երեկոյթն:

Եւրոպայ և Ամերիկա եկող երիտասարդաց համար մասնաւոր ծառայութիւն մ'ալ կրնայ մատուցանել ՄԱՐԶԱՐԱՆ չափ և յաջողութեան տեսակէտէն: Միայն ալ նահանգաց մէջ հազարաւոր հայ գործաւորներ կան որք թէ և Ամերիկացոց չափ և թերեւ աւելի ուժով են բայց գործանոցաց մէջ նոցա չափ բաղձալի և յաջող չեն, ինչո՞ւ — վասն զի Հայերն ծանրաշարժ են և դանդաղ և մեքենաներն գործածելու մէջ բաւական ճարպիկ չեն: Տաճկաստանի մէջ ամեն բան կամաց կամաց կատարուելէն զատ՝ նոյն նահապետի ժամանակէն մնացած գործիներով կը կատարուին. ուստի և Հայերն ալ պարզ և ծանր շարժումներու մէջ պզտիկուց մեծցած լինելով՝ Ամերիկայի դժուարին գործերուն զժուարտ կը վարժուին: Սոքա ՄԱՐԶԱՐԱՆԻ առաջնորդութեամբ, շաբաթն գոնէ միանգամ կրթութիւն ընելով կրնան տաճկաստանէ Ամերիկացոյ մի ճարպիկութիւնն ստանալ: Մեր հայրենակիցք գիտեն նաև թէ Ամերիկացիք որքան կը նային մարդուն արտաքին երեւոյթին և ձեւերուն. ո՞րչափ անգամ պատահեր է որ գործանոցի մի պեսն իւր սոջեւ շարուած 30—40 Հայերուն մէջէն 3—4 հատ միայն զատած առած է գործին մէջ, վասն զի միւսներուն կեցուածքն, նայուածքն, շարժումքն դէժ տպաւորութիւն ըրած է իւր վերայ: Եթէ այդպիսի Հայեր ՄԱՐԶԱՐԱՆԻ հրահանգաց կարեւորութիւն տան, պիտի տեսնեն թէ որքան տարբեր մարդիկ պիտի երեւին, և թէ ինչպէս գրտն ալ պիտի յաւնեն այն առիւծային ոյժն զոր իրենցմէ շատերն ունին:

Այս բոլոր օգտակար նպատակաց ծառայելէ զառ Տիար Գաբարեանի դրօշակն պէտք է գնահատուի այն եռանդուն և հայրենասէր երիտասարդաց կողմանէ և որք համոզուած են թէ հայրենեաց դասն կրնայ օր մի իւրեանց բազկի ուժին կարօտիլ: Այսպիսիք թող գիտնան թէ մարդ փափաքեալ վայրկենին չկրնար հրաշիւք իմն տէր լինիլ այն ճարպիկութեան և կարողութեան զոր երկար և յարատեւ հրահանգմամբ միայն կրնայ սք ստանալ: Երիտասարդք կրնան մէկ վայրկենի մէջ բարկութեամբ լեցուիլ բռնապետութեան մէկ նոր հարուածին կամ կոտորածին վերայ, բայց պատուաւոր և արդիւնաւոր կերպիւ շարժելու համար բարկութենէն աւելի բան պէտք է — խումբ կազմել, ուսին և հրացան գործածել, քան զՔուրդն լաւ ևս գիտնալ պաշտպանել և յարձակիլ, ամփոփիլ և տարածուիլ, կրակել և սուրինել, նըշաններով խօսք հասկոյնել, հոկել ևն. ևն. զորս ՄԱՐԶԱՐԱՆԻ կ'ուսուցանէ գիւրին եղանակաւ:

Օսմանեան բարեխնամ կառավարութիւնն զինուորական լանտաւոր կրթութիւն կա տայ մեր թշնամի դրացիներուն — Քրդերուն: Արժան չէ՞ որ այդ բարբարոսներուն չափ գտնէ և մեք Հայերս կրթութիւնք, որպէս զի արժանապէս կարենամք, եթէ հարկն պահանջէ, ըզմեզ, մեր գիւղեր, մեր հօտեր, մեր կարավաններ, մեր ընտանիք և մեր եկեղեցիներ պաշտպանել:

Մեծ. Տիար Գաբարեանի պարտիք շնորհակալ լինիլ որ այսպիսի բազմօգուտ գործ մի հեղինակած է փոխանակ հաս մ'ալ աւելցնելու այն վէպերուն և թեթեւ գրուածներուն վերայ զորս այնքան երիտասարդներ կը գնեն սիրով և կը կարդան վնասով:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԱՄԵՐԻԿԱՅԻ

ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԵԱՆ

(Շար. Տես թիւ 4 և 5)

3

ՎԱՃԱՌԱԿԱՆՔ

Մինչեւ 15—20 տարի առաջ արեւելեան գորդն և տեղնագործութիւնք շատ յարգի էին Միացեալ Նահանգաց մէջ, և սակաւին նոր էր այդ ապրանքներու ճաշակըն և առևտուրն, ուստի և վաճառողքն սակասաթիւ էին և գներն թանկ: Հայ ուսանողներէ շատեր, օգնութեամբ յանձնարարական նամակաց, կրնային յայնժամ հարիւրին հինգ հարիւր շոհով վաճառել այդ ապրանքներէ և իրենց ուսմանց ծախքն հանել և աւելին ալ: Դրամագլխի տէր հայ վաճառականներ կրնային այդ ժամանակամիջոցին կարի յաջող գործ կատարել, բայց չեն եղած այնպիսիներ, և այժմ ալ դժուար է լինիլ քանի որ Ամերիկացի միլիոնատէր վաճառականներ ահագին ճիւղեր հաստատած են արեւելեան վաճառաց և մեծ գործ կ'ընեն: Դոցա հետ մրցիլ ի հարկէ անհնար է մեր երիտասարդ վաճառականաց, որք ոչնչի չափ դրամագլխով սկսած և յամրապէս աճեցուցած են իրենց կարողութիւն մինչեւ 3—4 հազար թալէնթի կամ աւելի:

Արեւելեան ապրանքի վաճառականաց մէջ ունիմք մի քանի հոգի որք դրամագլխի կոշտելու արժանի գումարով գործ կ'ընեն, և Պոլսէն ուղղակի կը ներածեն վաճառք կարենոր քանակութեամբ: Նիւ Եորք քաղաքին մէջ կայ այս կարգէն Յովհաննէս Թաւանճեան: Կան նաև սերիշներ որք վաճառականութեան այս ճիւղին մէջ բազում փորձառութիւն ստացած՝ յաջողապէս յառաջ կերթան, ունենալով հաստատուն վաճառանոց, ինչպէս Յ. Հայկունի և Թոփաքեան ի Նիւ Եորք, Գեորգ Սինան ի Պրուքլին, Պօլիկեան, Ալիսն և Ալիէհան ի Պոթըն, Ներկարարեան ի Տէթրոյիտ, Ասատուրեան և Սիմոնեան ընկ. ի Կրէնտ Րէփրատ, Վարժապետեան և Արթուրի Պաքչեան ի Ուոշինթըն, Կոստիկեան և Պետրոսեան ընկ., Մուրատեան և Փուշմանեան ընկ. ի Շիքաիօ, Էնֆիլէճեան և Քէպապեան ի Նիւ Հէյվըն, Եագուպեան, Քէօյլեան, Գառապեան, Թէքիրեան, Դամիանոսեան ևն: Իրօք մեր վաճառականաց թիւն 40ի կը հասնի ըստ ոմանց, և որովհետեւ ոմանք կը տեղափոխուին քաղքէ քաղք կամ հեռուներն կը գտնուին դժուար է ճիշդ թիւն և տեղերն գիտնալ:

Հարկ է ըսել թէ մեր այս վաճառականք եթէ կրնան փոքր ի շատէ յաջողութեամբ գործ ընել այժմ երբ Ամերիկացիներ կան հսկայ դրամագլխով նոյն գործն ընող, պատճառն այն է որ մերայինք աւելի նեղութիւն յանձն կ'առնեն և նուազ կը ծախուեն: Մերայնոց շատերն որք յատուկ վաճառանոց ունին, յաճախ կ'երթան ուրիշ քաղաքներ և ըստ եղանակին աճուրդ կուտան, որ շատ յաջնեցուցիչ գործ է: Թէեւ ուղեւորութիւնք բաղձաւորաբար հեշտ են այս երկրի մէջ, սակաւին պէտք է խոտաւովանիլ թէ շատ խոնձիչ և վատառողջ բան է յաճախ ճամբորդել և օգ ու ջուր փոխել: Ծանր գորգերն դէպ զէպ շարել, վար թափել յաճախորդին առջեւ կամ կախել ի տես, շարունակ փոշի կուլ տալ, ծրարներ շինել, հաշիւներ ընել, ինքն իրեն քարտուղարն և տոմարական և գանձակալն և գնողն լինիլ, — այս ամենայն սոսկալի չերպիւ կը յաջնեցունեն և տարիներով շարունակուելով մարդուն առողջութիւնն ալ կը քանդեն: Բայց այս նեղութիւններն կրող մեր երիտասարդք լաւագոյն կը համարին այս ողորտ գործով զբաղիլ և աւելի հեշտ ապալ այլ յոյս տածել քան թէ գործանոցներ:

րու մէջ չարաչար աշխատիլ աւուրչէքով: Արդարեւ այսպիսեաց փափաքն է տեղ մի հաստատուիլ և տեղափոխութեանց նեղութիւններէն ազատիլ երբ իրենց դժբախտութիւնս բաւական աճի և թոյլ տայ իրենց այդպէս ընել:

Արեւելեան ապրանքի վաճառականաց մէջ չորհրդինք զԿիւլապի Կիւլպէնքեան, վասն զի նա բաւական տարբեր պայմանաց մէջ, մեծ դրամագլխով մէկէն ըսկսած է գործն Նիւ Եորքի մէջ վերջերս, և նմա անկ է այլապէս մրցիլ ամերիկացի վաճառականաց հետ:

Ունիմք նաեւ մի քանի վաճառականներ որք արեւելեան ապրանքի հետ գործ չունին: Ասոնց կարգէն են Իսկեաններ, Կիւլեաններ, Սարքեան ևն որք իրենց արտադրութիւններ կը վաճառեն, և Ասլան Սահակեան որ առնող և վաճառող է բուն Ամերիկայի վաճառքներու:

Հայ-նախէ

ՆԱՄԱԿ ԹԵՎՐԱՆԻՆ

20 Յունիւ . 1892

Թեհրան

Առ Մեծ . Խմբագրապետ ազգային «Հայք» Լրագրի:

Այո՛, տխուր է սիրտս. առաջին անգամ գրիչ վերցնեմ մի քանի տող գրելու աշխարհի մի ծայրից դէպ ի միւս ծայրն մի այսպիսի տխուր բան գրելու համար:

Ամերիկայի Հայերը մեզ համար ուղերձ չ'ուղարկեցին այլ մի դար ու կրակ ուղարկեցին: Արդեօք Ամերիկայի մէջ չկար մի օրինաւոր մարդ:

Թեհրանի բոլոր ժողովուրդն զգլեցած է:

Ամբողջ երեք ամիս նա նստել է մի խեղճ գրաչարի տունը, և փոխանակ իր գործերը կանոնաւորելու և հեռանալու Թեհրանից՝ սկսել է կուսակցութիւններ պատրաստել, գնալ մի կուսակցութեան հետ ուրիշ տեսակ խօսիլ, միւսի հետ ուրիշ և գրվացնել ամբողջ քաղաքի հայ ժողովուրդը. «Արմենիային» և «...ին» երկիրնք բարձրացնել, իսկ «Հայք»-ին, «Հնչակ»-ին և «Առաջնի»-ին ոտնակոխ անել:

Բայց, Պարոն Ս., ի՞նչ ես կարծում. Թեհրանի ժողովուրդը քեզի չափ խելք չունի:

Ամերիկայի Հայերը թող լաւ իմանան, որ Թեհրանի Հայերը ուղերձի ներկայացնելուցը այնքան չնորհակալ չեն լինի որքան նրա այս տեղից հեռանալուց:

Մենք գարմանում ենք և մի միանց հարցում. ախր, միթէ Ամերիկայում մի օրինաւոր մարդ չկար, որ այս միմոսին ուղարկեցին: Դարձեալ Հայոց պատմութիւնը մեզ մի քիչ հազտագնում է: Դարաբաղի մէլիքութեան ժամանակ յայտնի Մէլիք Շահնազարը մի պատգամաւոր է ուղարկում Շահ-Աբասին: Ընթերցող գտէք ո՞վ է լինում այդ պատգամաւորը — պուլուպուղին (որը մելիքը պահում էր իր մօտ տխուր ժամանակը հետը ծաղրածութիւն անէ)..... Շահը հարցնում է թէ Մելիք Շահնազարը մի լաւ մարդ չունէ՞ր ինձ մօտ պատգամաւոր ուղարկելու: Պուլուպուղին պատասխանում է թէ Մելիքը լաւերը լաւերի մօտ ուղարկեց. իսկ ինձ էլ քեզ մօտ:

Հիմայ էլ մենք գոհ լինելով պատմութիւնից, ասում ենք — Մենք ալ դրան էինք արժանի:

Խօսքս վերջացնելով կը խնդրեմ՝ յարգելի գաղթականներից որ չուտով հեռացնեն այս տեղից այս անչնորհքին... խառնակիչին...:

ԽԱՆԶԱՐԱՐ

ՆԱՄԱԿ ԽՆԴՐԱՆԻՆ

Խարբերդ, 15 Յունիւ . 1892

Վերջերս երկու հրդեհ պատահեցաւ, մէկը բոլոր Հայերուս սիրտն այրեց և միւսը Մէլիքի Կառավարութեան պալատը:

Հայոցս սիրտն դառն ցաւով լեցունող հրդեհը մեր կեդրոնական Վարժարանի առաջ դասատու Յովհաննէս Գապուլեանի մահն եղաւ:

Այս երեսասարդ, որ Ակնայ քաղաքէն է, Խարբերդի Եփրատ Գոլէճին մէջ ընթացքն աւարտեց, և այնքան գերազանց հանդիսացաւ որ նոյն հաստատութեան ուսուցչական մարմնոյն անդամ ընտրուեցաւ: Հինգ տարիի չափ հոն ուսուցիչ լինելէ յետոյ Խարբերդի կեդրոնական Վարժարանին գլխաւոր ուսուցչի պաշտօնի կոչուեցաւ: Քանի տարի է ի վեր կը շարունակէր այդ պաշտօնը նշանաւոր ձեռնհասութեամբ, և իւր համբաւը բոլոր գաւառին մէջ տարածուած էր: Թէ աշակերտաց և թէ ժողովրդին պաշտելին եղած էր Գապուլեան:

Եւ ահա թիֆոյի ախտն իր ճիրաններուն մէջ առաւ Դեկտեմբերի վերջերն այս պատուական անձնաւորութիւնն, և վերջապէս՝ յափշտակեց տարաւ:

Դարմանող բժիշկն մոռֆինի չափազանց մեծ չափ մը տուած է և այդմ կ'ընծայուի նորա մահն, ըստ հաստատուն զրուցաց: Քաղաքացիք դատ բանալու եղան բժշկին դէմ:

Բոլոր ժողովուրդն սուգ զգեցաւ: Վարժարանն ի նշան սգոյ փակուած մնաց մի քանի օր:

Նախանձայոյդ և սիրալիր մրցում մ'ալ տեղի ունեցաւ այս առթիւ տեղւոյս Բողոքական և Լուսաւորչական ազգայնաց մէջ: Բողոքականը կ'ուզէին թաղման հանդէսը կատարել վասն զի Գապուլեան Բողոքական էր. միւս կողմէն Լուսաւորչականը կը պնդէին թէ իրենց անկ է յուղարկուորութեան հանդէսն կատարել քանի որ հանգուցեալն իրենց դպրոցի ուսուցիչն և իրենց գաւառացի մտաւորական հայրն էր: Վերջապէս Լուսաւորչականը շահեցան դատն, և թաղեցին զայն Ս. Յակոբ Եկեղեցւոյ գաւթին մէջ, կարգաւորաց շարքին մէջ:

Գապուլեան դեռ 27 տարեկան էր, և հայր միոյ ուստեր:

Նորա տարածամ մահն ողբալի կորուստ մ'է մեր գաւառին կրթական գործոյն համար:

ՎՇՏԱՀԱՐՆ

ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՅԱՄՆԵՐԻԿԱ

Միացեալ Նահանգաց կառավարութիւնն իրաւամբ մտահոգ կը գտնուի գաղթային խնդրոյն համար որ այս երկրի գլխաւոր խնդիրներէն մին է, չասեմք առաջինն: Խնդիրն այն է թէ ի՞նչպէս կարելի է արգելուլ անբաղձալի օտարականաց գաղթումն յԱմերիկա: Անբաղձալի ասելով կը հասկնան հաշմանդամներն, արեւոյդներն, խեղագարներն, ապուշներն, ոճրագործներն, անբուժելի ախտերէ զարնուածներն և փոխադրական ջերմերէ կամ այլ տարափոխիկ հիւանդութիւններէ բռնուածներն, առանց ապրուստի միջոցի անարհեստ և անգէտ մարդիկն որք հանրային զթութեան վերայ բեռ միայն լինելու դատապարտուած են — աւանդիկ անբաղձալի տարրեր:

1891 ին, Յունիսի մէջ կառավարութիւնն Մասնա-ժողով մի անուանեց յատկապէս Եւրոպա երթալով այս մասին քննութիւններ կատարելու պաշտօնով: Մասնա-

ժողովոյն անդամք վերադարձած լինելով Եւրոպայէն՝ տեղեկագիր մի մատուցին Եւրոպական Նախարարութեան: Ըստ այս տեղեկագրի՝ ի գաղթում մոտոյ պատճառներէն են Միացեալ Նահանգաց առաւելութիւններն, բարձրագոյն թոշակն, նուազագոյն ժամերն աշխատութեան, աւելի լաւ ապրուստ, ազատութիւն զինուորական ծառայութենէ և ծանրակիր տուրքերէ, առևտրական ձեռնարկներու և երթևեկի ազատութիւն, վերջապէս՝ ընկերային բարձրագոյն մակարդակաց վերելակելու աւելի լաւ պատեհութիւններն:

Մասնաժողովն վիճակագրութիւններ ձեռք բերած է բոլոր ատլանտեան Նախարարութեան ընկերութիւններէն, որոցմէ կը տեսնուի թէ գաղթողաց 100 ին առաւել քան 60ն ի ձեռին ունին թիքէթ կամ անցատուս՝ զոր ստացած են քան զիրենք յառաջագոյն Ամերիկա գաղթեալ աղգականներու կամ ծանօթներու կողմանէ: Եւ անցեալ ամառ երբ այցեցի Քէսսլ կարտըն Հայրենակից մի ետ յղուելէ ազատելու համար, տեսայ այն առթիւ թէ ցամաք ելած Հայերու մեծ մասն տոմսակներ ունէին այս երկրի մէջ գնուած եւ իրենց յղուած: Այսպիսի տոմսեր տեսակ մի յանձնարարական են ի ձեռքս գաղթականին, վասնզի կը ցուցնեն թէ այս երկրի մէջ անոք չեն:

Նախարարութեան Ընկերութիւնք այժմ շատ կը ըզգուշանան անյարմար անհատից գաղթումն քաջալերելէ, և ոմանք շրջաբերականօք հրահանգ տուած են իրենց գործիչներու կատարելապէս պատկառ կալ ամերիկեան օրինաց այս մասին:

Մասնաժողովն կը թելադրէ օրէնք դնել որ առարկելի օտարականներն ցամաք չկրնան հանուիլ, այլ զայնս բերող ընկերութեան ծախիւք և նաւովն վերադարձուին: Այս աւելի աշխուրջ և զգուշաւոր պիտի ընէ ընկերութիւններն: Խորհուրդ կուտայ նաև որ օրէնքի բարեփոխութիւն մ'ընդունուի այն իմաստով որ անձարակ և անոք աղքատի կարգ անցնող օտարականներն ետ յղուին իրենց երկիրն:

ՕՏԱՐ ԼԵԶՈՒԱԻ ԼՐԱԳՐԵՐ

Ի ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՍ

Ըստ վերջնագոյն վիճակագրութեան, զոր Ռաւէլ կուտայ, այժմիկ Գերմաներէն լեզուաւ 802 թերթ կը հրատարակուին Միացեալ Նահանգաց մէջ: Սոցա 95ն ամենօրեայ են և 561 շաբաթեայ. մնացեալք են եռաշաբաթեայ, կիսաշաբաթեայ, երկշաբաթեայ, կիսամսեայ, ամսօրեայ, երկամսեայ և եռամսեայ:

Փռանաւական Գաղթականութիւնն ունի 50 թերթ, որոց 3ն ամենօրեայ — մին ի Նիւ Եորք, երկրորդն ի Նիւ Օռլէանս և երրորդն ի Սան Ֆրանսիսքօ— 4ն կիսաշաբաթեայ, 38ն շաբաթեայ և 5ն ամսօրեայ: Քանատայի մէջ աւելի բազմաթիւ են Փռանսերէն թերթք քան ի Միացեալ Նահանգս:

Շուէտացի և Նորվեգիացի Գաղթականութիւնն ունի 118 թերթ — 3 ամհօրեայ ի Շիքակոյ, 1 ի Միննիապոլիս, 84 շաբաթեայ, 10 կիսամսեայ, 20 ամսօրեայ թերթեր:

Սպաներէն թերթից թիւն է 39, որոց 13ն ի Նիւ Եորք:

Պոլիմերէն լեզուաւ կայ 27 թերթ, որոց չորսն ամենօրեայ և մնացեալք առհասարակ շաբաթեայ:

Բոլոններէն կան 18 թերթեր: Իտալերէն 14: Հոլանթացիք ունին 10: Եբրայեցերէն 9: Ֆիններէն 2: Իռլանտերէն 2: Փորթուկալերէն 2: Չիններէն 2: Ռուսերէն 2: Հայերէն 2: Յունարէն 1:

Այս օտար թերթերու մէջ Գերմաներէն, Փռանսերէն և Սքանտինավերէն լեզուօք հրատարակեալներն են

որ պատկառելի թուով կը հրատարակուին: Գերմաներէն թերթերու ոմանք 10—20 և մինչև 50 հազար օրինակ կը հանեն: Նիւ Եորքի մէջ հրատարակուող Փռանսերէն ամենօրեայ 10 հազար օրինակ կը հանէ, որոյ շաբաթական ալ կայ 20 հազար օրինակօք: Սքանտինավերէն թերթերն ևս շատ յաջող են, վասն զի անոնցմէ 11 հատն 10 հազարական օրինակ կը տպագրեն, 8 հատն՝ 15 հազար օրինակ և 2ն՝ 25,000:

Միացեալ Նահանգաց մէջ հազիւ հազ գաղթականութիւն կոչուելու անժանի թուով Հայեր կան — իբր 4,500— և սակայն անցեալ տարի այդ փոքրիկ գաղթականութիւն պատուեալ էր— ըստ ոմանց պատժեալ էր— երեք թերթերով: Այս տարի պատիժն թեթեւցած է և ժողովուրդն սակաւիկ մի միթարուած:

Ծ Ի Ծ Ա Ղ Ն Ե Ր

(Պարոնեանի մի անտիպ ձեռագիր)

Կ. Պոլիս 8 Յունիւ. 1882

Բարեւ ձեզ իմ ընթերցողներ և ընթերցողանոյշներ, դուք զիս ճանաչելու դժբաղդութիւնն չունիք, վասն զի առաջին անգամն է որ գրական հրապարակի վրայ կերելիմ, ես ալ զձեզ ճանաչելու պատիւը չունիմ, վասն զի իմ բնական գիւղին մէջ ինձմէ գատ մարդ չեմ տեսներ, մենակեաց կեանք մը կանցունեմ: Այսու ամենայնիւ կը փութամ ձեզ նոր տարի և բարի կողանք շնորհաւորել և ամեն երջանկութիւն և բարօրութիւն մաղթել. վաճառական ընթերցողներուս նորանոր նենգութիւններ կը բարեմաղթեմ, գողերուն ծուկերուն արագութիւն, դրամօժիտ չունեցող աղջիկներուն հարուստ ամուսիններ քօնսօլիտն ունեցողներուն՝ համբերութիւն, ազգ. պատրիարքարանի սնդուկին մէջ բնակող գաղթական մուկերուն ապուխտ և պանիր, Ամրոսիոս վարդապետին հաստատելիք երկրագործական վարժարանին յարմար քաղաք մը, Միացեալ Ընկերութեան տնօրէն ժողովին՝ սէր և միութիւն, Պատրիարքին հրաժարականի խնդրոյն՝ լուծումն, խեղճ խմբագիրներուն՝ զոյգ մը կօշիկ, արձագանքիմ շարունակութիւն և բաժանորդներ որ բաժանորդագիրն կը վճարեն: Այս բարեմաղթութիւններն ընելէ յետոյ կը դառնամ անցեալ տարուոյ վրայ կարճ և լուրջ հայտածք մը նետել:

Տարի մ'ալ անցաւ գնաց կամ տարի մ'ալ գլորուեցաւ կամ տարի մ'ալ սահեցաւ անցեալին անդունդին մէջ կամ տարի մ'ալ մեռաւ և թաղուեցաւ յաւիտենականութեան մէջ կամ տարի մ'ալ բոլորեցաւ կամ տարի մ'ալ կորուսինք — ընթերցողներուս իւրաքանչիւրին ճաշակին կը յանձնեմ ասոնց միջէն գործածել իրեն հաճելի երեւցածն — մենք այդ տարուան մէջ ի՞նչ գործեցինք, շահեցանք թէ կորուսինք: Այս երկուքէն ո՛րը կուզէք, եթէ կը փափաքիք որ շահած լինինք՝ ես ալ կը համաձայնիմ ձեզ. իսկ եթէ կը կարծէք որ կորուսած լինինք՝ ես ալ ձեր կարծիքն հաստատելու պատրաստ եմ, վասն զի այժմ խմբագիրներն իրենց սովորութիւն ըրած են գրել ինչ որ կուզէ ժողովուրդն և ոչ թէ ճշմարտութիւնը: Ասոր պատճառն ալ յայտնի է. թերթերն ժողովուրդէն կապին և ոչ թէ ճշմարտութեան, որ խմբագիրներուն դրամ չտար, կարծելով թէ պաշտպանուելու պէտք չունի, և ամեն օր կը հաւածուի: Այսպէս, մեր աղգային թերթերն, քիչ բացառութեամբ, տարւոյն բոլոր օրերուն մէջ թոյլ կուտան ժողովուրդեան սխալմունքէ սխալմունք գլորուիլ, բարոյական և նիւթական կորուստներու մէջ թաղուիլ, իսկ երբ նոր տարին հասնի՝ ճարտասանական ձեւերով կըսկսին պօռալ «Ժամանակին անիւներուն վրայէն տարի մ'ալ թռաւ, քայլ մ'ալ առինք դէպ ի գերեզման, տա-

րի մ'ալ կորուսինք — բաժանորդ չկորուսինք ա'—մեր կենաց շրջանէն, ա'ւաղ... բարէ... ապստ'ս, ա'հ... վախ... ո'հ... և մեր ազգն ի՞նչ ըրաւ անցեալ տարւոյն մէջ արտաքին տեսակէտով, ներքին տեսակէտով, մակերեւութական տեսակէտով, յատկապէս տեսակէտով, խորային տեսակէտով, յուսամբ ուրեմն որ նոր տարին երջանիկ լինի մեր ազգին նկատմամբ որուն պէտքերն օր ըստ օրէ կաւելնան դժբաղդարար շնորհք տեսնան ձեր ամենեցուն յաւիտեանս յաւիտենից ամէն և բաժանորդադինը չվճարող բաժանորդներն իրենց պարտքը հատուցանել բարհաճին ողջ եղէք և մենք ողջ եմք)։ Ինծի գալով՝ ես անխոհեմութիւն կը համարիմ անցեղոյն վրայ երեմիական ողբեր յօրինելն, ապագային համար ալ մարդարէանալն անօգուտ կը կարծեմ, իմ սկզբունքս է ախտը տեսնելուս շէս դեղազիր գրել և ոչ թէ այսօր հիւանդը քննել և ըսել իրեն թէ «դու հիւանդութիւնդ չարունակէ, ես գալ տարի նոր տարեգլխուն առթիւ կուգամ քեզի դեղազիր մը տալ։ Սակայն անցեալի վրայ մեր ընթերցողներուն փոքր գաղափար մը զոր ընթերցողներն կրնան մեծցնել, եթէ ուզեն, տալու համար կը ծանուցանենք թէ՛

- Անցեալ տարի մեր ազգն չկարողացաւ գործել։
- Ինչո՞ւ։
- Ինչո՞ւ... օրերը կարճ էին...

Ս. Պատրիարք հօր հրաժարականի խնդիրը չվերջացաւ և ոչ ալ Հայկական խնդիրը սկսաւ։

Ահա երկու կարեւոր խնդիրներ որոց մին չսկսիր և միւսը չվերջանար։ Հայկական խնդրոյն, այն է Հայաստանի բարենորոգման գործադրութիւնն կարծեմ մօտեքս չպիտի սկսի... բուսաբանական պատճառներու համար։

Վերջին տեղեկութիւններուն նայելով — ա'հ, անիծեալ վերջին տեղեկութիւններ, երեք տարիէ ի վեր կը խաղցնէք մեր ազգն, կը խաբէք զմեզ, և սրբան ալ բազմաթիւ էք, որ չէք լինար խաբեաւորներ, չհաւանդիրներ, չողորորթներ, ժողովուրդը քնացնողներ, ոտախօսներ, դեռ ի՞նչ անուն տամ ձեզի ո'վ... վերջին տեղեկութիւններ, առաջին տեղեկութիւններն ձեզմէ շատ պարկեշտ էին, անոնք ճշմարտախօս էին — վերջին տեղեկութիւններուն նայելով՝ Անգլիոյ դեսպանն յանձնարարած է կառավարութեան, որ առաջ յապաղման ձեռնարկուի Հայաստանի բարեկարգութեան խնդրոյն, իսկ Վաքըթիմ նայելով ձմեռուան եղանակին մէջ այդ բարեկարգութիւն անկարելի է։ Այս բարեկարգութիւնն բոյս կամ հունտ կարծած լինելու է Վաքըթիմ, որ ձմեռուան եղանակին մէջ լինելու բան չէ կրնայ։ Ո՞ր եղանակին մէջ կարելի է արդեօք այդ։ Այս մասին չիտօսիր Վաքըթիմ։ Գարնանն եղանակին. այդ եղանակն բարեկարգութեան զոհելը մեղք է։ Ամառուան եղանակին. այդ հրատապ եղանակն հանգստութեան սահմանուած է։ Աշնան եղանակին, այդ եղանակն ալ առերեք հաւաքելու եղանակն է, բարեկարգութեան ո'վ կարող է գրաւել։ Ո՞ր եղանակին մէջ ուրեմն. մեր Թուրքիոյ մէջ չորս եղանակներ ունինք, որք, ինչպէս ցոյց տուինք, բարեկարգութեան յարմարութիւն չունին...

Մեզի ուրիշ եղանակ մը, նոր եղանակ մը չունինք աստուածներ։

«ԱՐՁԱԳԱԿ»

ԵՅԼ ԵՒ ԵՅԼԻՐ

ԲԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Մարաջախտ Ահէտ էյուպ փաշային վիճակուած է Սուլթանին հրովարտակն տանիլ Եգիպտոսի նոր Խըտիվին։

Բ. Դուռն պատերազմական տուգանք այսի տարուան բաժինն՝ 350 հազար օտմ. ոսկի վճարեց Ռուսիոյ։

Յունաստանի Բիրէ քաղաքին մէջ բողոքական Յունաց եկեղեցին պաշարեցին մի քանի հազար Յոյներ և ծեծելով փախուցին պաշտօն կատարողներն, ըստ մասին քակեցին եկեղեցւոյ շէնքն, և գրքերն ու այլ գոյքըն հրկիզեցին։

Ռուս կառավարութիւնն թղթատուն հաստատած լինելով ի Թեոփոնիկէ և ի Մոնթ-աթոսի Թուրք վարչութիւնն թղթաաւարական պայուսակ մը բռնել տուած է։ Կ. Պոլսոյ ռուսական դեսպանին բողոքին վերայ՝ պաշտակն ետ տրուած է։

Նիւ Եորք Հէրըլտի ուղղեալ հեռագրի մի նայելով Գերմանիոյ կայսրն իւր վերջին ատենախօսութեան մէջ որուն վերայ աշխարհ ապշեցաւ և Գերմանք այնքան ցաւեցան, ըսած կը լինի սա խօսքն ալ ի մէջ այլոց — «Պիտի փոշիացունեմ զՌուսիա»։ Այս խօսքն կը զեկուցուի Ձարին, որ գերմանական դեսպանն կանչելով կ'ըսէ նմա. «Ասա՛ ցկայսր քո թէ երբ ուզէ սկսիլ փոշիացունելու գործն, կէս միլիոն զինուոր պիտի նետեմ անդր քան զսահմանազուխն մեծաւ հաճութեամբ»։

Տրիպոլիսի մէջ մեծ յուզում տեղի ունեցաւ։ Երբ պաշտօնեայ մի կը կարդար հրապարակին վերայ Սուլթանին հրովարտակն առ Արաբս, որով զինուորական ծառայութեան կ'ենթարկէր զայնս, բազմութիւնն յորձակեցաւ պաշտօնէին վերայ և պատուեց հրովարտակն։ Շուկայի բոլոր խանութներն փակուեցան։ Յետոյ ձիաւոր զինուորներու խումբ մի վերայ հասնելով ցրուեց ամբոսն։ Հակառակ կառավարութեան զգուշութեանց յուզումներն նորէն պատահեցան։ Հազարաւոր Արաբներ քաղաքէն դուրս աւաղուտին վերայ ժողովեցան նպատակ ունենալով բողոքել և հրովարտակն յետս կոչել տալ։ Անտի դիմեցին դէպ ի քաղաքն, բայց զինուորաց խմբեր դիմաւորեցին զիրենք, և սկսաւ մարտն։ Քարերու կարկուտ մ'էր որ կը տեղար զինուորաց գլխուն։ Շատ չտեսեց սակայն այս կատաղի ընդհարումն։ Մի քանի հոգի միայն սպաննուեցան և ոմանք ալ վիրաւորեցան։

Կ. Պոլսի Պուլիարական ներկայացուցիչ Վուլքովիչ, որ դաշունի մահառիթ հարուած մ'ընդունած էր, մեռաւ մի քանի օր յետոյ։ Ռուսական դեսպանատան հին խաֆաս մի կը կարծուի լինիլ ոճրագործն, և քաղաքական հանգամանք կ'ընծայուի եղեռան։

Ժամանակէ մ'ի վեր Եւրոպայի մէջ գործաւորական միութեանց կամ ընկերվարական կուսակցութեանց ցոյցերն աւելի ծանր հանգամանք տունուլ սկսած են։ Սպանիոյ մէջ, ի Քսէրէս, ի Լանտոն, ի Տանձիկ, ի Պրուսիայի և վերջապէս ի Պէրլին իսկ անօրինակ ցոյցեր եղան վերջերս։ Պէրլինի ոստիկանութիւնն նշանաւոր է իւր վայրագ խառութեամբ, ուստի և ընկերվարականք

Ժպրհած չէին իցոյց, բայց վերջապէս ունեցան այդ յանդգնութիւն և կրկին ու կրկին սոսկալի ընդհարմունք տեղի ունեցան ցուցարար գործաւորաց ամբոխին և «սոսիականաց միջեւ» :

Ռուսիոյ Զարն, վերջին զօրահանգէսի առթիւ, սա ճառն արտասանած է սպայակուտին. —

«Ի ձեռս Աստուծոյ եմք մեք: Կը յուսամ թէ, եթէ առիթն ներկայանայ, պիտի գտնեմ զօրագնդերս այնպէս պատրաստ ինչպէս այսօր գտած եմ զայնս: Գարունն ուստական բանակն պիտի բաժնուի երեքի. Հիւսիսային բանակն պիտի լինի ընդհարմանատարութեամբ Վլատիմիր իշխանին, արեւմտեանն՝ զօրավար Կուրգոյի, հարաւայինն՝ զօրավար Տրակովսկոյի: Գերագոյն հրամանատարութիւնն պիտի հաւատարմութիւն զօրավար Օպրուչէֆի, այժմիկ սպայակուտին պետն:

300 հազար խաղախ և ուրիշ հեծելազօրք այս վարկենիս կը գտնուին ի Բոլոնիա, աւստրիական և գերմանական սահմանադէպոց երկայնութեամբ:»

Յունաստանի Եորկիոս թագաւորն Տէլիայանիսեան նախարարութեան հրաժարականն ինդրեց: Նախարարք վարանեցան, մերժեցին հրաժարիլ, ըստ որում խորհրդարանի մեծամասնութիւնն ունէին: Վերջապէս թագաւորն հրաժարեցոյց զիրենք:

Կ. Պոլսէ կը հեռագրեն Լոնտոնի Տ. Նիւզի, Մարտ 1ին. — Ամերիկայի ներկայացուցիչն Հիւրշ, խստիւ բողոքած է Բ. Դրան այն նոր օրէնքին դէմ որ կը պահանջէ օտար վարժարանաց ի թուրքիս փակուամբ եթէ չուտով յատուկ արտօնագիր չստանան: Արդէն մի քանի ամերիկեան վարժարանք զեկուցում ընդունած են: Անգղիական դեսպանն համաձայնած է նոր օրէնքին: Եթէ արդարեւ ճշմարիտ է այդ, պէտք է որ նոր օրէնքին նշանակութիւնն լիովին կշռել կարացած չլինի: Ամերիկացիք կը գանգատին թէ Անգղիա, որ Ռէտքլիֆի օրէն հետէ կրօնական ազատութեան ախոյեան եղած էր, այսօր Բ. Դրան ձեռքն զէնք տուած կը լինի Հիւրշի բողոքին յաղթահարելու:

ՆՈՐ—ԴԱՐՔԵՆ կը տեղեկանամք թէ Ռուսիոյ հանրային Կրթութեան նախարարութիւնն հրահանգներ ուղղած է ուսումնարանաց հոգաբարձուներուն յառաջիկայ տարուէն սկսեալ զիրուորական մարմնամարզութիւն մտցնելու ուսումնարանական բոլոր հաստատութեանց մէջ:

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

Վերջին ժամուն նամակ մ'առինք Բալուէն ծանուցանող թէ Բրդերն Ուղուկոպա գիւղէն — որ Բալուէն հինգ և կէս ժամ հեռի գիւղ մ'է — երեք տարեկան հայ աղջիկ մի խաղացած տեղէն առեւանգեր տարեր են:

Պուլկարիոյ Բուսչուք քաղաքին մէջ հրատարակուող «Դանուբ» լրագրի մէջ կը կարդանք. — «Քաղաքին մէջ միտթարական է «Աքդատա» ընկերութեան» գոյութիւնը, որ գրեթէ 5—7 տարիներէ ի վեր հաստատուած է 3—4 անձնաւորութեանէ բաղկացեալ արհեստագործ ազգայիններէ: Այս ընկերութիւնը վառեալ ազգային նախանձախնդրութեանէ՝ չթողուր մուրալ հայ աղքատին ու անանկին և կամ պատահական անփող ուղեւորին, և այս ընկերութեան շնորհիւ քաղաքին մէջ մի հաստ հայ մուրացիկ չկայ:»

Թեհրանէն առ «Հայք» ուղղեալ թղթակցութիւնն զոր ուրիշ էջի մէջ կը գտնեն ընթերցողք, բանիմաց ազգայնոյ մի գրչէն է: Թող այս դէպքն դաս մի լինի Ամերիկայի հայ դպրականութեան զգօն մասին որ դատաւարանի անհոգութեամբ թոյլ կուտայ տհաս բայց եռանդուն փոքրամասնութեան մի գործածել յաճախ մեր բովանդակ գաղթականութեան անունն յանպատեհըս:

Ուէյլի Բրինսին որդւոյն, դքսի Քլարէնսի, մահուան առթիւ «ԼԱՌԱՆՔ»-ի խմբագիրն ցաւակցական նամակ մ'ուղղեց Լորտ Սալզպրիին: Լորտն հետեւեալ պատասխանն ուղղեց առ Տի. ԶԵՐԱԶ: «Տէր, ներկայ ամսոյ 19 թուակիր ձեր թուղթն դրած լինելով յոսս թաղուհւոյն՝ իմոյ վեհապետի, ստացած եմ զհրաման նորին Վեհափառութեան հաղորդել զնորին անկեղծ շնորհակալիս առ Հայ ժողովուրդն վասն քաղցր արտայայտութեանն նորա համակրանաց դէպ յինքն, դէպ նորին Արքայական Բարձրութիւնն իշխան և իշխանուհի Ուէյլի, և դէպ արքայական ընտանիս, այն մեծ վըշտին առթիւ որ դիպեցաւ նոցա և բովանդակ աղբին, մահուամբ նորին Արքայական Բարձրութեան, դքսի Քլարէնսի և էվոնտէյլի և ԸՐԼԻ Էթլոնի: Եմ, Տէր, ձեր յոյժ հնազանդ խոնարհ ծառայ, ՍԱԼԶՊՐԻ»

Ֆռանսերէն Լեգուալ գիրք մի հրատարակուեցաւ ի Փարիզ «ԿՈՎԿԱՍՏԷՆ ՅՊԱՐՍԿԱՅԱՆ ԾՈՅՆ» հեղինակութիւն Միւլէր—Սիմոնիսի, որ կը պարունակէ ի վերջ հատորոյն «Ծանօթութիւններ Հայաստանի աշխարագրութեան և հին պատմութեան վերայ»: Գիրքն պատկերով և աշխարհացոյց քարտէսներով ճոխառած է:

Նիւ Եորքի Հայկական Միւլթեան Մարտ 5ի նստին տեսնախօսն էր Տիար Ճինիշեան, որ գեղեցկացիւն ճառ մի կարդաց սկզբունքներու վերայ: Սկզբունք դարուն մէջ կ'ապրինք, ըսաւ, և խօսեցաւ ազատութեան, պատերազմի, և սիրոյ վերայ: Ծառի վերջին մասին մէջ իգական սեռի դատարարական կարեւորութեան վերայ և վերջապէս բարոյական սկզբունք կարեւորութեան վերայ խօսեցաւ: Բաղձալի էր որ յարգոյ ճառախօսն իւր ոյժ ամփոփէր աւելի որոշ և անձուկ սահմանի մէջ և ջանայր ազգու կերպով բացատրել գլխաւոր սկզբունք մի:

Միութեան գրքերն պահպանելու և գործածելու մասին նորէն խօսուեցաւ: Թէ և գրեանն բազմաթիւ չեն կը պարունակեն ինչ ինչ հազուագիւտ հատորներ, ինչպէս ԴՈՒՐԵՆԻ գործոց հաւաքածոյն: Անդամներէն Տի. Վահրամ յանձն առաւ երեք հատոր գրքեր իւր ծախիւք կազմել աւալ. Տի. Սէքսանեան յանձն առաւ Վարդանայ պատկերին նոր շրջանակ մի շինել աւալ:

Միութեան 6դ տարեգարձին առթիւ լինելիք ծախուց համար 30 թալէնթ վարկ տրուած էր Գործ. Ժողովոյ. առ այդ հանգանակութեան ձեռնարկուեցաւ նոյն երեկոյ, և 36 թալէն ստորագրուեցան:

Մարտ 19ի նստին մէջ պիտի ատենախօսէ Տի. Յ. Արշակունի, նիւթն է Հայաստան և Ազատութիւն:

ՄՇԱԿԻ միջոցաւ ուսական վիճակագրութեան մի կ'առնումք հետեւեալ թուանշաններն: Կովկասի բոլոր բնակչաց թիւն է 6 միլիոն 689 հազար 967 հոգի, որոցմէ 803 հազար 696 հայեր են: Ամբողջ Ռուսաստանում հայերն ունեցեր են 1272 եկեղեցի, 1494 քահանաներով: 1890 թուականին ուսագաւանութիւն ընդունել են 15 հազար 160 հոգի, որոնց 3 հազար 113ն Մահմետականութեանէ դարձած են: 1890 թուականին ամբողջ Ռուսաստանում տալագրուած են 8638 հեղինակութիւններ, որոցմէ 102 հասն հայերէն:

ՄԵՏԻՍ ՆԵՂԻԿԵՆ

Պատիւ ունի ծանուցանել թէ երկար տարիներու փորձառութեան շնորհիւ ամենեն ապահով և ածան գընորով փոխանակագիր տալ կարող է Խարբերդու և Պոլսոյ վրայ, և փարս կամ թիքէթ խրկել Մարսիլիա:

Ունի նաև ընծայի շատ յարմար Տաճկական Չինական, Հնդկական և Ճաբոնական ամեն տեսակ ապրանքներ: Ծանօթութիւն.— Գործերնու խաթրին համար ստիպուած չեմք մեր անունը կորսնցնել և օտար անուն մը կրել, մենք բուն Նահիկեան ենք: Մեզ գրել հետեւեալ հասցէիւ

A. N. Nahikian, 39 Pleasant St. Worcester, Mass.

Հայեր

Երբ նոր գլխարկի, օձիքի կամ ու է չարական հանդերձեղենի պէտք ունենաք, գնացէք New York Hat House, 14 Front Street, Worcester, որ Մէյն փողոցին մօտիկ է, հոն պիտի գտնէք լաւ ապրանքներ միայն, և շատ ածան:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

Վենետիկի բազմարդիւն Միաբանութեան հետեւեալ երեք հրատարակութիւններն ստացանք շնորհակալութեամբ:

(1) ՅԱՓՇՏԱԿՈՒԹԻՒՆ Հանդէպ ծովաւճին Մօտա-Պուռնուի.

Գրեց Հ. Բարսեղ Վ. Սարգիսեան. 65 էջ:

(2) Ղազար Փարպեցի, ազգային ոսկեղարեան պատմիչի Պատմութիւն Հայոց և Թուրքի առ Վահան Մամիկոնեան.

Գ. տպագրութիւն, էջ 720.

(3) Լորտ Պայրընի «Պանդխտութիւն Հարուսայ Ասպետի կոչուած քերթուածներն: Անդղիական բնագրին դէմ դրուած է հայերէս գրաբար թարգմանութիւնն էջ 148:

Շնորհակալութեամբ ստացանք նաև թատերական գրուած մի «Մուսայ Պէյ և իւր սարսափելի եղբուն-գործութիւնք» գործ Ապլլարիպի, տպեալ ի Ռուսչուք

— «ՀԱՅՔ»-ի 1891 տարին ամբողջ կապուած կը ծախուի 2 թալէն 5 սէնթի:

Հետեւեալ գրքերն կրնան գնուիլ, գինն կամիսիկ վճարելով «ՀԱՅՔ»-ի խմբագրատնէն, 202w. 23d St. New York

ՀԱՅ ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՆՑԵԱԼՆ ՈՒ ԱՊԱՌԱՅՆ Գրեաց Մ. Սմբատ Գաբրիէլեան, 1888, (նախապէս հրատարակուած «Արեւելք»-ի մէջ) 61 էջ. գինն է 20 սէնթ կամ մէկ ծրամք:

ՈՒԵՍՏ ԱՏԵՆԱԾՈՒԹԵԱՆ, ի պէտս Ազգ. Վարժարանաց. գրեաց Մ. Ս. Գաբրիէլեան, 1891, 128 էջ, գին մէկ թալէն կամ հինգ ծրամք: Եթէ վարժարանաց մէջ իրեն դասագիրք գործածելու համար ուզուիմ բազմաթիւ օրինակներ միանգաման հարիւրին յիսուն գեղջ կը լինի:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՄԵՐՁԵՐԵՆ

(Չափաւոր օրինակներ միայն տպեալ)

Սոյն Մարզարան 128 երեսներէ բաղկացեալ և 36 ձևերով բացատրեալ, ինքնուսուցիչ գրքոյկ մ'է զինորական մարզանաց և մարտագիտական սկզբանց:

Գինն որեւէ հասցէի համար մէկ թալէն կամ հինգ ֆրանք: Վեց կամ աւելի օրինակներ գնողին, հարկւրին 25 զեղջ կը լինի: Կրնայ ստացուիլ «ՀԱՅՔ»-ի խմբագրութեան կամ ուղղակի հեղինակէն, հետեւեալ հասցէով, G. Casbarian, Gen. P. O. Brooklyn, New York U. S. A.

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ՄԻ ԱՐԱՐԱՏ ԼԵՌՆԷՆ, անգղիերէն տետր մ'է 54 երեսներէ բաղկացեալ, որ կը պարունակէ հեղինակին - Տիար Միհրան Պաղտասարեանի - կենսագրութիւնն, Օսմանեան Պատմութեան վերայ ակնարկ մի և և Հայոց Պատմութեան բովանդակութիւն մի: Տետրին վերջին երեսներն նուիրեալ են Հայոց պէտքերն և բաղձանքն ցուցնելու:

Այս տետր կը վաճառուի 50 սէնթի. դիմել հեղինակին հետեւեալ հասցէիւ — Mr. M. Baghdasarian, 411 Walnut St. Des Moines Iowa, U. S. A.

WORCESTER FIVE CENTS SAVINGS BANK

No. 246 Main St. Worcester, Ma

Այս պանթան մինչև հինգ սէնթի փոքր գումար կ'ընդունի: Յունվար, Ապրիլ, Յուլիս և Հոկտ. ամսաց առաջին օրէն կը հաշուի դրամի շահն 800ին 4: Պանթային ժամերն են 9էն 1, և 2էն 4: Շաբաթ օրերն՝ 9էն 1:

E. B. STODDARD, President.

J. STEWART BROWN, Treasurer.

O. F. HARRIS

ԵՏԵՄԵՐՆԵՐ

476 Main St. Worcester, Mass.

ՎԱՐՊԵՏ ԵՒ ՓՈՐՉԱՌՈՒ ԲԺԻՇԿ Է

ԱԿՈՍՆԵՐՈՒ

PHARMACIE FRANCAISE,

NORBERT FRANCK.

311 7th AVENUE,

NEW YORK.

Դեղագիրք կը պատրաստուին խնամով

BUSH & CO

ՊՈՒՇ ԵՒ ԸՆԿ.

Գ Ե Ղ Ա Ք Ո Ր Մ

(Հաստատեալ ի 1849)

56 FRONT STREET WORCESTER, MASS.

Դեղագիրք խնամով կը պատրաստուին և չափաւոր գնով

LANTELME'S

HOTEL & RESTAURANT,

40 UNION SQUARE

NEW YORK CITY

16 և 17 րդ փողոցներու միջև արեւելեան կողմն:

—Ընտիր Գաղղիական խոհարարութիւն—

Նախաճաշ 40 և ճաշ 75 սէնթ

Տ Պ Ա Դ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Մ. Ս. ԳԱՐԲԻԷԼԵԱՆ